«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2018 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա.Դավոյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. մասնաճյուղը զգալի աշխատանք է իրականացրել ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման, ուսումնական գործընթացը գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներին ու հանձնարարականներին համապատասխան կազմակերպելու, ուսումնական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատված դասատախտակին ու ժամանակացույցին համապատասխան:

2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը բոլոր կրթաձևերում կազմել է 559, այդ թվում՝ առկա ուսուցման բակալավրիատում՝ 333, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 86, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 116, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 25: Ավարտական կուրսերի ուսանողների թիվը 161 է, որից 1 ուսանող չի մասնակցել առկա ուսուցման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորմանը: Նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակահատվածում մասնաճյուղում սովորել են 630 ուսանողներ:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով ուսման առաջադիմությունը մասնաճյուղում կազմել է. առկա ուսուցման բակալավրիատում՝ 75.3%, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 85.8%, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 61.3%, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 78.6%: 33 ուսանողներ հեռացվել են ցածր առաջադիմության, այդ թվում նաև՝ ուսման վարձերի պարտքերի պատճառով:

2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել և ավարտական աշխատանքներ են պաշտպանել 94 ուսանողներ, որոնցից գերազանցության դիպլոմ են ստացել 11-ը: Առկա ուսուցման մագիստրատուրան թողարկել է 46 շրջանավարտ, որից գերազանցության դիպլոմ են ստացել 8-ը: Հեռակա ուսուցման բակալավրիատը թողարկել է 20 շրջանավարտ:

2017-2018 թթ. մասնաճյուղում իրականացվել են.

1. Կրթական գործընթացի բարեփոխումներ

1. Ավարտին է հասցվել «Բազմաբնույթ համաթվերի ձևավորման մեթոդաբանության կատարելագործման հայեցակարգերը» թեմայով դրամաշնորհային աշխատանքը: Աշխատանքի արդյունքները ներկայացվել են հրատարակման:

2. Համաձայն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի խորհրդի՝ 2013 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 9 որոշման՝ 2017 թվականի հունվարի 9-ից գործողության մեջ էր դրվել մասնաճյուղային գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը: 2017 թվականի դեկտեմբերի 26-ին դրամաշնորհներ տրամադրող մրցութային հանձնաժողովը առաջարկեց հայտարարել դրամաշնորհի ծրագրի մրցույթ «Եվրասիական տնտեսական միության երկրներում իրականացված բազմաբնույթ վերափոխումների միասնականացումը և համեմատական վերլուծությունը» թեմայով:

3. Հրատարակվել են պրոֆեսոր Ս.Ա.Դավոյանի «Բիզնեսի կառավարում» ուսումնական ձեռնարկը և «Երկրների բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետության վելուծությունը. ժամանակի մարտահրավերները և հաղթահարման ուղիները» մենագրությունը:

4. Բնագիտական ամբիոնի դասախոս Ա.Հովհաննիսյանը հրատարակել է 3 միջազգային հոդված, իսկ 2 հանրապետական հոդված ներկայացված է հրատարակման:

5. Մասնաճյուղը՝ տնօրեն Ս.Դավոյանի ղեկավարությամբ, մասնակցության հայտ է ներկայացրել «Հորիզոն 2020» ծրագրին: Որպես դրամաշնորհի թեմա առաջարկվել է "Integral Index of Reforms":

6. ՀՀ կենտրոնական բանկում ամփոփված ԿԲ առաջին նախագահ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի հերթական մրցույթի արդյունքների շրջանակներում մասնաճյուղի «Ֆինանսներ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Լեոնուհի Սահակյանն ու «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Անժելա Պապիկյանը արժանացել են արծաթե հուշամեդալների, իսկ Անժելա Պապիկյանը՝ նաև կրթաթոշակի:

7. Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի 11 դասախոսներ մասնակցել են հանրապետական գիտաժողովի և հրատարկման փուլում են զեկուցումների նյութերը: Բնագիտամաթեմատիկական առարկաների ամբիոնի դասախոսները հրատարակել են 9 գիտական հոդված, որից 2-ը՝ միջազգային ամսագրերում:

8. Մասնաճյուղի 3 դասախոսներ մասնակցել են միջազգային սեմինարների և գիտաժողովների Պորտուգալիայում, Գերմանիայում և Հունգարիայում:

Կազմակերպվել է Դարոն Աճեմօղլու, Ջեյմս Ա. Ռոբինսոն «Ինչու են ձախողվում պետությունները» գրքի քննարկում:

10. Իռլանդիայի Դուբլին քաղաքում 2018 թվականի մարտի 1-2-ն անցկացված միջազգային գիտաժողովի ժողովածուում տպագրվել է «Իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունը. դրա մակարդակի գնահատումը» վերնագրով հոդվածը: Այն տպագրվել է գիտաժողովի նյութերի ժողովածուում (Տնտեսագիտության

և Բիզնեսի կառավարման կիրառական հետազոտություններ), որը գրանշվում է Google Scholar-ի և Scopus-ի կողմից:

11. 2018 թ. մայիսի 31-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում անցկացվել է «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով հանրապետական ուսանողական գիտաժողով: Ներկայացված զեկուցումներից լավագույնները ներկայացվելու են տպագրության:

2. Մարդկային ռեսուրսներով ապահովվածություն

2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ մասնաճյուղի դասախոսների թիվը 58 է (այդ թվում 18-ը՝ համատեղությամբ), որից՝ 4 դոկտոր, պրոֆեսոր, 12 թեկնածու, դոցենտ, 2 դոցենտ, 10 թեկնածու, 30 ասիստենտ և դասախոս:

Մասնաճյուղն ունի 9 հայցորդ:

3. Գործունեության միջազգայնացում

Ընդհանրապես, մասնաճյուղի միջազգայնացման գործընթացն իրականացվում է բուհի միջազգայնացման գործընթացի տրամաբանությամբ և դրա շրջանակներում: Մասնավորապես՝ 2017-2018 ուստարում ֆակուլտետի 5 ուսանողներ (4 մագիստրանտ և 1 բակալավր) «Էրասմուս+» ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ ուսումնառել են եվրոպական տարբեր բուհերում (4-ը՝ Իտալիայի Պադովայի համալսարանում, 1-ը՝ Լեհաստանի Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարանում):

4. Ռեսուրսային ապահովվածություն

Մասնաճյուղի լսարանային ֆոնդը՝ 1488.96 քառ.մ, ամբողջությամբ բավարարում է ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Մասնաճյուղում առկա է համակարգչային տեխնիկայով ու պրոյեկտորով (կամ Smart գրատախտակով) համալրված 2 լսարան: Ընդ որում, դրանցից մեկը կահավորվել է 2017-2018 ուստարում:

5. Կառավարման բարելավում ու ընթացակարգերի մշակում

2017-2018 ուստարում մշակվել ու գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել մասնաճյուղի նոր կանոնադրությունը: Բացի դրանից, մշակվել են մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների կանոնակարգերը:

Միաժամանակ, առկա են որոշակի թերություններ և բացթողումներ ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման, կրթության նոր մեթոդների կիրառման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների կատարման գործում: Այսպես՝ դեռևս բավարար մակարդակի վրա չէ գործնական, լաբորատոր պարապմունքների և ուսանողների հետ կատարվող անհատական աշխատանքների որակը: Միևնույն ժամանակ, ամբիոնները դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման ժամանակ դեռևս ամբողջությամբ չեն հիմնվում ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման վրա: Դեռևս շարունակվում են թերությունները նաև ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ղեկավարման, կարծիքների տրամադրման և գրախոսությունների մասով: Ղեկավարների կարծիքները, գրախոսու-թյունները շատ հաճախ ձևական բնույթ են կրում՝ դժվարացնելով գնահատման գործընթացը, ինչը արձանագրվել է նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից:

Ֆինանսական գործունեությունը 2018 թ. հունիսի 1-ի դրությամբ

2017-2018 ուստարվա ուսման վարձերի գումարը կազմում է 205.646.000 ՀՀ դրամ, որը 2016-2017 ուստարվա համեմատությամբ նվազել է 9.050.000 ՀՀ դրամի չափով: 2017-2018 ուստարում մուտքերը կազմել են 153.515.000 ՀՀ դրամ, տարեկան զեղչը՝ 10.001.000 ՀՀ դրամ: Պարտավորությունը ուսման վարձավճարների գծով կազմում է 42.130.000 ՀՀ դրամ, որը 2016-2017 ուստարվա 28.860.000 ՀՀ դրամի համեմատությամբ ավելացել է 13.270.000 ՀՀ դրամի չափով: Ծախսերի 85%-ը հատկացված է աշխատավարձի հոդվածին, ծախսերի 9%-ը կազմում են կոմունալ ծախսերը, իսկ մնացած 6%-ը հատկացված է այլ ընթացիկ ծախսերին:

Արձանագրված խնդիրներ

1. Դասավանդման որակի ու մեթոդների, ուսանողներին մատուցվող նյութի և մատուցման եղանակների հետ կապված խնդիրներ, որոնք հատկապես ակնառու են մագիստրատուրայում:
2. Ամբիոններում արտաքին ֆինանսավորմամբ գիտահետազոտական և դրամաշնորհային ծրագրերի գրեթե բացակայություն:
3. Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, դրանցում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության, ձեռքբերված տեսական արդյունքները դասավանդման պրակտիկայում գործադրման խնդիրներ:
4. Մագիստրոսական կրթության կազմակերպման խնդիրներ՝ բացակայություններ, ծրագրերի կրկնություն, գիտահետազոտական փորձառության կազմակերպում:
5. Հեռակա ուսուցման բակալավրիատում առաջադիմության խնդիրները:
6. Ուսումնաարտադրական փորձառության կազմակերպման ու անցկացման հետ կապված խնդիրներ:
7. Դասամատյանների վարման, գիտելիքների գնահատման ամփոփաթերթերում նշումների անսխալ գրանցման, ուսանողների ընթացիկ ակտիվության ճիշտ հաշվարկման խնդիրներ:
8. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և դրանց վերաբերյալ կարծիքների տրամադրման և գրախոսությունների որակի հետ կապված խնդիրներ:
9. Մասնագիտական նորույթները ուսանողներին հասանելի դարձնելու խնդիրներ:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝

1) հաշվի առնելով Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական վիճակը՝ առաջարկություն ներկայացնել ընդունելության քննությունները մեկ առարկայով պակասեցնելու նպատակով,
2) ուշադրության կենտրոնում պահել մասնաճյուղում վարվող կադրային քաղաքականության, ամբիոնների կողմից դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկավարժական և մասնագիտական անհրաժեշտ հմտություններ ունեցող կադրերին,
3) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, մասնաճյուղի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները,
4) ակտիվացնել աշխատանքները մագիստրատուրայում դասավանդող դասախոսների ընտրության և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու, ինչպես նաև մատուցվող ծրագրերի և համապատասխան նյութի որակը բարձրացնելու ուղղությամբ,
5) հետևողական աշխատանք իրականացնել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացի ուղղությամբ: Յուրաքանչյուր դասաճախողման դեպք դարձնել առանձին քննարկման առարկա,
6) խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների նյութերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները,
7) մշակել և իրականացնել դասախոսների և աշխատակազմի ատեստացիոն համակարգը, որը հնարավորություն կստեղծի ազատվել մասնագիտական ցածր մակարդակ ունեցող աշխատողներից,
8) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին,
9) խրախուսել արտասահմանյան համալսարանների դասախոսների հետ համատեղ ուսումնագիտական աշխատանքների անցկացումը,
10) առաջարկություն ներկայացնել մասնաճյուղում հեռավար ուսուցում կազմակերպելու նպատակով:

3. Հանձնարարել մասնաճյուղի ամբիոնների վարիչներին՝

1) ակտիվացնել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստերի ժողովածուների հրատարակումը,
2) խրախուսել «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման ու գործընկեր համալսարաններում դասավանդման ծրագրերին ամբիոնների դասախոսների ակտիվ մասնակցությունը,

3) ապահովել ակադեմիական փոխանակության ծրագրերով արտասահմանյան համալսարաններում դասավանդած կամ հետազոտություններ իրականացրած մասնագետների փորձի տարածումը ամբիոնի աշխատողների շրջանում,
4) ըստ մասնագիտացման՝ համալսարանում հյուրընկալվող արտասահմանյան համալսարանների դասախոսների հետ հաստատել սերտ և տևական կապեր՝ համատեղ հետազոտությունների իրականացման, համահեղինակությամբ հոդվածներն արտասահմանում կամ Հայաստանում հրատարակելու նպատակով,
5) խրախուսել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների վարման նոր, ժամանակակից արդիական ու արդյունավետ մեթոդների կիրառումը,
6) հեռակա ուսուցման բակալավրիատում առաջադիմությունը բարձրացնելու նպատակով (դասավանդման մեթոդի, հանձնարարությունների վերանայում և նոր ձևաչափի սահմանում) մշակել համալիր միջոցառումներ և ներկայացնել մասնաճյուղի խորհրդի քննարկմանը,
7) 2018-2019 ուսումնական տարվա առաջին ամբիոնի նիստում քննարկել և հաստատման ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ցանկը,
8) պարբերաբար վերանայել ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների ծրագրերը (խոշոր գործատուների պարագայում համաձայնեցնելով նրանց հետ), պատշաճ հսկողություն իրականացնել փորձառության անցկացման վայրի ընտրության և ուսումնասիրությունների ընտրված ուղղությանը վերջինիս համապատասխանության նկատմամբ, նրանց հետ կնքելով փոխադարձ շահերը հաշվի առնող պայմանագրեր:

4. Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականներն իրականացնելու համար:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. Հունիսի 15
Երևան